

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мшак».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Ե Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաւանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Ե Ֆ օ Ն № 253.

ՀԱՐԱԹ ԹՈՒԼԻՍԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՈՒԱԿՈՒԹԻՒՆ

Հնէրը գնում են, նորերը նրանց տեղը չեն
բռնում: Հայոց հարցը և եւրոպական մամուլը:
— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարիամ Մէլիք-Աղա-
մալեան: Աղաքեան պատրիարքը: Մատենադրու-
թիւն: Նամակ խմբագրութեան: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական վերջին անցքերը: — ՀԵ-
ՌԱՅԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Թիֆլիսից:

ՀՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ, ՆՈՐԵՐԸ ՆՐԱՆԵՐ
ԶԵՆ ԲՈՒՆՈՒՄ

Վերջին տասն տարվայ ընթացքում մեր
հասարակական և գրական կեանքը մեծ կո-
րուստներ ունեցաւ, և այդ կորուստները
կրկնապատիկ զգալի և ծանր են մանաւանդ
այն պատճառով, որ ասպարէզից իջնող,
մեռնող գործողների տեղ նորերը չեն գուրս
գալիս, հեռացող շարքերին նոր շարքեր
չեն փոխարինում:

Այսպէս, օրինակ, մեր հասարակական-
գրական ասպարէզը զրկվեց այնպիսի հըս-
կայից, ինչպէս Գրիգոր Արծրունին: Մեր
փոխգործակալները այնպիսի տաղանդներէն,
ինչպէս Բախչի և Ծերենց, մեր բանաստեղ-
ծութիւնը այնպիսի մեծ գործակալից, ինչ-
պէս Ե. Ռաֆայել Պատկանեան, մեր հոգեւոր-
կանութիւնը այնպիսի աչքի ընկնող ներ-
կայացուցիչներից, ինչպէս Ներսէս Վարժա-
պետեան և կամ Խորեն Նարեկ, Գարեգին
Սրուանձեան, Գաբրիէլ Այվազյանի, Վա-
հան Բարապետեան Բաստամեան: Մեր երգի-
ծական գրականութիւնը այնպիսի ընդու-
նակ գործողներից, ինչպէս Պարոնեան, մեր
մանկավարժութիւնը այնպիսի ուսուցիչնե-
րից, ինչպէս Առաքել Բաճաթեան: Հայ
կանայք այնպիսի բացառիկ անձնաւորու-
թիւններից, ինչպէս Մարիամ Մէլիք-Աղա-
մալեան-Արծրունի: Ել չենք խօսում այն-
պիսի արժանատի օրինակի զաղաքացի-
ների մասին, ինչպէս Յովհաննէս Խատի-
սեան, Լևոն Վարդապետ Խօջայեան, Պօղոս
Մէլիք-Վարդապետեան, և այլն և այլն: Իսկ
այդ բոլորի փոխարէն, հասարակական-գր-
ական ասպարէզի զանազան մասերում
գործող այդ բոլոր աչքի ընկնող անձնաւո-
րութիւնների փոխարէն կամ բոլորովին չեն
գուրս գալիս նոր ոյժեր, և կամ, եթէ կան

նորերը՝ նրանք դեռ ձեռք չեն բերել այն
հեղինակութիւնը, այն ոյժը և այն ժողո-
վրդականութիւնը, որ կարողանան փոխա-
րինել ասպարէզից իջնողներին...

Մենք հաւատում ենք կեանքի առաջա-
դիմութեան, մենք հաւատում ենք, որ
եթէ հայոց կեանքը սրանից քսան, երե-
սուն, քառասուն տարի առաջ աւելի վատ,
աւելի աննպաստ հանգամանքներում կաղ-
մակերպեց այնպիսի խոշոր ոյժեր, ինչպէս
Նալբանդեան, Նազարեան, Գրիգոր Արծրու-
նի, Պատկանեան, Բախչի, Ներսէս Վար-
ժապետեան՝ նա կը շարունակի ասպարէ-
զում էլ, աւելի աջող պայմանների մէջ՝ տալ
նորանոր ոյժեր, ո՛վ գիտէ, գուցէ աւելի
մեծ ոյժեր: Բայց և այնպէս չենք կարող
չը խոստովանել, որ այս րօպէիս, ներկա-
յում, մեր նոր գործողները և նոր գործող-
ները, ինչ ասպարէզի վրա էլ նրանք լի-
նէին դեռ անկարող են բռնել ասպարէզից
հեռացած խոշոր ոյժերի տեղը, չունենալով
նրանց հաւասար հեղինակութիւն, ոյժ և
անուան...

Ահա այդ է պատճառը, որ շատ ան-
գամ հասարակական-գրական կեանքի նեղ
րօպէներին, երբ հասարակութիւնը կարիք է
զգում, որ հնչէր մի զօրեղ, հեղինակաւոր,
անպայման աղբու ձայն՝ այդ ձայնը չի
հնչում և չը կայ...

Եւ հենց այդ պատճառով այն կորուստնե-
րը, որ մենք կրում ենք մեր գրական և
հասարակական ասպարէզի վրա՝ դառնում
են մեր հասարակութեան համար կրկնակի
ծանր, կրկնակի զգալի:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒՆԸ

I

Ռեյտերի գործակալութեան հեռագրում են կ.
Պօլսից յուլիսի 15-ից, որ հայկական խորի հա-
մար կազմված թիւրքական մասնաժողովը վեր-
ջացրեց իր գործը և նշանակեց այն կէտերը, ու-
րոյն վերաբերմամբ թիւրքական հակաձառնում է:
Միմիտրիների խորհուրդը յանձնեց զեկուցագիրը
սուլթանին, կցելով նրան մի բացատրութիւն
մաղբաթաւ, որի բովանդակութիւնը սակայն
անյայտ է դեռ. եւ:

II

Կ. Պօլսից, յուլիսի 19-ից հեռագրում են Ռեյտերի

տասարդ գրագէտ մը, Լևոն Մկրտիչեան, որ
քանի մը օր առաջ բանտարկուած և անպարտ
արձակուած էր, երկու շաբաթ է նորէն բանտ
զերին: Գիշերները կը չարչարեն, որպէս զի խոս-
տովանի թէ Հնչակեան է: Նազըմ փաշա ա-
ռանց քաջուելու կը յայտարարէ, թէ Լևոն Մը-
կրտիչեան տանջանքներու չի դիմանալով, վերջը
վերջը ինչ ըլլաւ պիտի խոստովանի:

Ինչպէս կը տեսնէք, կրնայ ըլլաւ, որ բնա-
մասնակցութիւն ունեցած չըլլալ մէկը ո և է
յերարկական գործի, բայց տանջանքին մէջ
չըրածը ըրած խոստովանելու է, որպէս զի գէթ
ստակալի տառապանքներէ ազատի:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՆՅՈՒՆ

II

Կ. Պօլսից, յուլիսի 12-ին
Երէկ նամակ յանձնեց էի թղթատան, երբ
հովը փոխուեցաւ: Մաս մը բանտարկեալներու
ազատութեան լուրը իմացուեցաւ: Ազատեցան
Պետրոս Մարիան, Լևոն Մկրտիչեան, Լուր
կայ թէ Սասունի խնդրին առթիւ Հայաստան
բանտարկուածները ազատուել են, ինչպէս նաև
ուրիշ տեղումնք ալ, նմանապէս Պօլսոյ բանտե-
րէն ալ:

Յանկարծ Պօլսոյ մէջ սկսաւ ընդհանուր ոգե-
ւորութիւն, այս արձակումները նշան են գոր-

գործակալութեան, որ երէկ (ուրեմն յուլիսի
18-ին) Բարձր Գուռը մասնաւոր կերպով հաղոր-
դեց Արգիշայի Ռուսաստանի և Ֆրանսիայի դես-
պաններին, որ հայկական ընթացիկների թիւրքա-
կան ծրագիրը պատրաստ է և շուտով կը ներ-
կայացվի դեսպաններին:

III

Անգլիական «Daily News» լրագրի յուլիսի
22-ի համարում կարդում ենք, որ սասունցիներ-
րին օգնելու հայկական կամիտեայի ժողոված
գումարի քանակութիւնը հասնում է 1938 ֆունտ
ստերլինգի:

IV

Ռեյտերի գործակալութեան հեռագրում են
Կ. Պօլսից յուլիսի 20-ից, որ Բարձր Գուռը յայտ-
նեց երեք պետութիւնների դեսպաններին, թէ
նա ուղարկում է Շաքիր-փաշային Հայաստան՝ հըս-
կելու բարենորոգումների ներմուծելուն: Այս-
տեղից պարզ կարելի է տեսնել, թէ ինչ տեսակ
է Թիւրքիայի մտադրած ընթացիկների քառաւոր-
թիւնը: Պետութիւնները զէմ կը լինեն հաւանա-
բար Շաքիրի նշանակվելուն, որովհետեւ նա էր Հա-
միդիէի գումարի ծրագիրը կազմողը: Եւ Թիւր-
քիան պէտք է յետ կանգնի իր դիտաւորութիւնից
այն խոսակցութիւնից յետոյ, որ ունեցել է լուր
Սուլթանի Ռուստէմ-փաշայի հետ՝ յայտնելով, որ
Անգլիայի քաղաքականութիւնը հայկական լընդ-
րի վերաբերմամբ չէ փոխվելու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԱՄ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԹԱՂՈՒՄ

Ամսիս 20-ին, հինգշաբթի, տեղի ունեցաւ
«Մշակ» լրագրի հրատարակչի հանգուցեալ տի-
կին Մարիամ Մէլիք-Աղամալեանի թաղումը:
Արդէն յուլիսի 17-ից սկսած խմբագրութիւնը
սկսեց ստանալ ցաւակցական հեռագիրներ, իսկ
յուլիսի 18-ին և 19-ին կատարված հոգեհան-
գիստների ժամանակ թաղման անձինք, ինտե-
լիգենտ և հասարակ դասակարգից, գալիս էին ի-
րանց վերջին հրաժեշտը և յարգանքը տալու
հանգուցեալին: Թիֆլիսի համբարը առանձին
ներկայանալով՝ հոգեց ասել տուաւ հանգուցեալի
դագաղի վրա:

Ժին յաջողութեանը: Աղաքի Սուրբ Երանի խիստ
հրահանգներ եկան, դեսպանները նորէն Գուռը
երթալով ծանուցին, թէ վերջնական է որոշում
նին, և ծրագիրը անպատճառ պէտք է ընդունի:
Տագնապ պալատին մէջ: Ամէտ Մուխթար-փաշա
եղիպտոսէն Պօլիս կուգայ. Հայաստանի բարձ-
րագոյն քովիսը ըլլալուն խնդրել հոս պիտի
վերջնապէս կարգադրուի:

Կիլիկիա փախչող եկեղեցականներուն և ա-
ռանց յարուցանելիք խառնակութեանց խնդրին
համար դեսպանները միջամտեցին. այսօր կըս-
վի— և հաւանական է—որ այդ դաւաճան եկե-
ղեցականները Կիլիկիայէն ուղղակի կըրուսողէմ
պիտի զրկուին: Գուռը իրեն ամօթ կը համարէ
որ Պօլիս բերուին: Այս լուրը թէ և վերապահու-
թեամբ կը հաղորդեմ, բայց ճիշտ ըլլալու է:
Ամեն ինչ կը ստուգուի երկու երեք օրէն:

Լուր կայ նաև թէ Մերսինի մէջ յերարկա-
կան մը սպաններ է Աբրահամ Կալիֆուսը:
Բայց չաւ ստուգութեան կ'արտատ է այս
լուր. պատրիարքարանը բան մը չը գիտեր:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՆՅՈՒՆ

III

Կ. Պօլսից, յուլիսի 15-ին
Կարծեմ թէ մասամբ անօգուտ եղան այն եր-

Հանգուցեալի մարմինը ամբողջ ժամանակ,
յուլիսի 17-ին, 18-ին և 19-ին, դրված էր այն
սենեակում, որտեղ վախճանվեց և «Մշակի»
անմահ հիմնադիր Գրիգոր Արծրունին: Այդ սե-
նեակը, որտեղ ամեն բան յիշեցնում է Գրիգոր
Արծրունուն և որտեղ պատերի վրա շարված են
նրա մահվան ժամանակ ստացված բոլոր պատկ-
ները, սև շղարշով ծածկված՝ խիստ տխուր, մի
և նոյն ժամանակ վեհ տաղաւորութիւն է գոր-
ծում: Այդ սենեակից և դուրս հանվեց յուլիսի
20-ին, հինգշաբթի, առաւօտեան ժամը 10-ին,
Արծրունու կեանքի հաւատարմ և անբաժան
ուղեկցի մարմինը, «Մշակի» խմբագրութեան և
Մէլիք-Աղամալեան ընտանիքի անդամների ձեռ-
քով:

Դեռ առաւօտեան վաղ, թէ փողոցը և թէ
քաղաքը սկսեց լցվել թաղման երկու սե-
ռի հասարակութեամբ: Հեղուկութեան բերվում և
ընկում էին դագաղի վրա պատկեր, որոնց ցու-
ցակը առաջ ենք բերում:

- 1) «Մշակի» արթուն պահապանին, տիկին
Մարիամ Մէլիք-Աղամալեանին՝ «Մշակի» որբա-
ցած խմբագրութիւնից:
- 2) Մարիամ Մէլիք-Աղամալեանին՝ Երևանի
հայ երիտասարդութիւնից:
- 3) «Մշակի» արժանատի հրատարակչի տիկին
Մարիամ Մէլիք-Աղամալեանին՝ Ալաւայիսայի
հայ երիտասարդութիւնից:
- 4) Հայ կնոյ իրաւունքների պաշտպան Մա-
րիամ Մէլիք-Աղամալեանին՝ Սօֆիա Քալանթար-
ից, Երիտասարդ Առաքելեանից, Սաթիկի Մալ-
խասեանից:
- 5) Ազնիւ սերմնացանի արթուն պահապանին՝
Թիֆլիսի համակող իրաւասարդներից:
- 6) Հանգուցեալի եղբայր Յովհաննէս Մէլիք-
Աղամալեանից:
- 7) «Մշակի» հրատարակչի Մարիամ Մէլիք-Ա-
ղամալեանից՝ մի խումբ հայ ուսուցիչներից:
- 8) Պրօֆէսոր Անդրեաս Արծրունուց:
- 9) «Աղբիւր-Տարաղի» խմբագրութիւնը՝ խո-
րին յարգանքով «Մշակի» հրատարակչի տիկին
Մարիամ Մէլիք-Աղամալեանին:
- 10) «Անմահ գործիչ Մարիամ Մէլիք-Աղամա-
լեանին»՝ Թիֆլիսի այգեգործական դպրոցի հայ
աշակերտներից:
- 11) «Մշակի» հրատարակչի տիկին Մարիամ

Կու նամակները զոր երեք օր առաջ զրկեցի:
Հեռագիրը անուշտ ետեւ ետեւ ձեռք հաղորդած
է ընդհանուր մտաւայման (ամիստիա) լուրը: Ահա
ինչպէս թիւրք թիւրքերը հաղորդեցին սուլթանին
հրամանը:

«Հա յը աւ տ ա ռ կ ե ա լ ն ե ռ ո լ ն չ ն ո ռ Վ ա ծ
ը ն դ հ ա ն ո լ ը ն ե ռ ո լ մ ի յ լ ե կ ու մ թ ու թ լ ա ղ ի
ն ե ռ ո լ մ մ է չ կը կարգանք թէ կայսերական հրաման
եղած է որ քաղաքական յանցանքի պատճառով
վեհապետութեան հաւատարմութեան երդում
տալէ յետոյ, արձակուին: Այս գիտարկական
անօրինութեան դուրս կը մնան անոնք որ
սպանութիւն կամ մեծ ոճիւր (ծինայթիլը աղիմէ)
գործել են: Հետեւեալ, ինչպէս լայնաբեր
այս ներումը հորհուրդ է, բացառեալ այս երկու
կարգի յանցանքներին, աւելի թիւթի յանցանքնե-
րու համար:

«Ըստ այս իրաւունքի, երեքշաբթի օր ժամը 7-ին
վերանորոգեալ դատարանին ընդհ. դատախազ ձեմալ
պէյ, ուստիկանութեան անօրէն Հիւսնի պէյ, ու-
ստիկանութեան մէջթուպէի Բաղդադ պէյ, երգուլն-
ցուցին սոյն հայ յանցապարտները և բանտէն
ազատ արձակեցին զանոնք, որ, այս առթիւ,
վեհ. Սուլթանին արեւատութեանը աղօթքներ
ըրին իր անհուն գթութեանը համար:
«Կայսերական այս իրաւունք հեռագրով հաղոր-
դուցաւ նաև կուսակալներուն, որպէս զի գոր-

հարուստների, —այդ բոլորը առաջ են բերել Բաղրամյանի համար քաղաքական շատ վտանգաւոր դրութիւն և առիթ են տուել անդիակային, գերմանական և մանաւանդ աւստրիական մամուլին խիստ յարձակումներ գործել պրինց Կորուզի, բաղրամյան այժմեան միջնորդութեան և Ռուսաստանի դէմ:

Կրքերը այնքան յուզված են Բաղրամյանի, կուսակցական և անձնական վրէժխնդրութեան թշնամութիւնները այն աստիճանի սաստկացել են, որ մինչ Բաղրամյանի ժողովրդի մի մասը ուրախացած, ցնծութեան ցոյցեր էր անում Ստամբուլի նոյն իսկ դիակի վրա՝ միւս մասը դառն արտասուներ էր թափում, որ հայրենիքը կորցրեց ամենամեծ հայրենասէրին, և երբեք և նոյն դաժադի առաջ՝ հանել նրա սպանութեան վրէժը: Ստամբուլի այրին և բարեկամները մեծեցին ընդունել Կորուզիեան պրինցի ցաւակցութիւնները և թող չը տուին, որ կառավարութիւնը որ և է կերպով մասնակցի Ստամբուլի թաղման, որովհետեւ Կորուզի պրինցը որոշել էր պետութեան ծախսով թաղել նրան:

Աւստրիայի կայսր Ֆրանց-Յովսէփը ուղարկել էր իր կողմից մի պատկ, իսկ պատմով դանազան կողմերից ստացված պատկերի թիւը 300-ից անցնում էր:

Բաղրամյանի իշխան Ֆերդինանդը և միջնորդութիւնը այնքան կորցրել են իրանց խելքը, որ առաջինը չը գիտէ ինչ անել, վերադառնալ Բաղրամյան թէ ոչ, և ուղարկել է իր թիկնապաշտ Ստոյանովին վիէննա խորհուրդ հարցնելու, իսկ միջնորդ-նախագահ Ստոյովը նամակներ է գրում եւրոպական լրագիրների թղթակիցներին, թէ նա մասնակից չէ Ստամբուլի սպանութեան:

Պարզ է, որ Բաղրամյան քաղաքական հանգամանքները կարող են ծանր կերպով բարդել և արդէն աւստրիական մի քանի լրագիրները ըսել են գուշակութիւններ անել, թէ Ռուսաստանը պատրաստվում է գրաւել Բաղրամյան:

Կրպի վրա քիչ իւր չեն ածում և խաղական լրագիրները, որոնք սաստիկ գրգռված են նրանով, որ Ռուսաստանը ընդունեց արխիմիական պատգամաւորութիւնը, քանի որ խաղական համարում է Արխիմիան իր վասալը:

Քիչ յուզում և գրգռում չէ պատճառում Ֆրանսիայում Գերմանիայի դիտաւորութիւնը՝ առնելու 1870 թիւ պատերազմի 25-ամեայ յօդուրները: Գերմանիան կամենում է տնոն իր յաղթութեան 25-ամեայ տարեդարձը, ուրեմն նա կամենում է յիշեցնել Ֆրանսիային նրա ծանր պարտութիւնը, և վերաբանալ հաղիւ գոյված վերքերը: Բնական է, որ Ֆրանսիան գրգռվում է, յուզվում է, նորից սկսում է մտածել ընկալն ի մասին:

«ՄՇԱԿ» ՀՆՈՒԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 յուլիսի: Յուլիսի 17-ին Թագաւորանոց Յէսարելիչը ժամանեց Պետերբուրգ, որ դիմաւորեցին նրան կայսրանուս Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնա և Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչ: Նորին Մեծութիւնը և Նորին Բարձրութիւնը այցելեցին Պետրոպոլսի սառնարը, ուր աղօթեցին Կայսր Ալեքսանդր III-ի դամբարանի վրա, և ապա ճանապարհ ընկան Պետերսօփ: Այդտեղ թագաւորանոց Յէսարելիչին ողջունեցին նաւահանգստում Մեծ Իշխան Ալեքսէյ Ալեքսանդրովիչ, ուրիշ Օթոմանական անձինք և իշխանութիւնները: Այդտեղից Նորին Բարձրութիւնը ճանապարհ ընկաւ դէպի Ալեքսանդրիայի ամարանոցը:

Լրագիրները հարգում են, որ պրոֆեսոր Զարեարին յուլիսի 17-ին հասաւ Պետերբուրգ, որտեղից գնալու է Պետերսօփ: Պրոֆեսոր Լէյդէն ճանապարհ ընկաւ Պետերսօփ:

ՕԴԵՍՍԱ, 18 յուլիսի: «Нов. Время» լրագրի այստեղ հիւր եղող աշխատակից Դիակով (պէնզ-դենիս Ժիտեկ) վախճանվեց կաթնաձից:

Կ. ՊՈԼԻՍ, 18 յուլիսի: Մէլնիկ քաղաքի մօտ, Մակիեւոնայում, տեղի ունեցաւ ընդհարում ապստամբների և թիւրքաց զօրքերի մէջ: Ապստամբները, թիւրքերի խօսքով, գործում էին դիւստիտի օգնութեամբ, որը սաստիկ վրդովեցրեց թիւրքերին: Թիւրքաց կառավարութիւնը հրամայեց առ այժմ դէպի կանչել 3000 պահստի

զինւորներ՝ Սերէս, Գրինա, Նեմիլեկով և Մէլնիկ քաղաքների համար:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 յուլիսի: Յուլիսի 18-ին, երեկոյան, կայսրուհի Մարիա Ֆեօդորովնա ճանապարհ ընկաւ Կանիա Թագաւորանոց Յէսարելիչի, Մեծ Իշխանուհի Սեմ Եւգենիանովայի և Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչի հետ: Մինչև կրօնատա Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնային ճանապարհ գցեցին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնան:

ՊԱՐԻՉ, 19 յուլիսի: Կայացաւ մամուլի ներկայացուցիչների երկրորդ միջազգային կոնգրէսի նախապատրաստական յանձնաժողովի նիստը: Յանձնաժողովը որոշեց կոնգրէս հրաւիրել Բորգո, սեպտեմբերի 13-ին:

ՎԻԵՆԱ, 20 յուլիսի: «Fremdenblatt» լրագրի տեղեկութիւնների համեմատ, Կորուզիեան պրինցը օգոստոսին կը վերադառնայ Բաղրամ:

Խմբագիր և հրատարակիչ՝
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ
բացակայութեան պատճառով
նրա

ԶՐԱ-ԷԼԷԲՏՐԱԿԱՆ
ԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ
(Սօլդակ, Սերգիեւսկի փողոց, № 14)

Ամուսնայ ընթացքում հիւանդներին կընդունի
ԴՅՇԿԱՊԵՏ

ՍՍՄՈՒԷԼ ՇԱՀՊԱՐՈՆԱՆՑ
կանանց և ջղախիւ հիւանդներին
ների

Ամեն օր, 1—2 ժ. ցերեկվայ և 7 ժամ
երեկոյան

Բուժարանում բացի էլէքտրական վան-նաներից, դուշերից, բժշկական մարմնամարզութիւնից —կին հիւանդների մասած, որի համար ընդունելութեան ժամերին ներկայ են լինում կին և տղամարդ մասած ժխտներ — մասածիստ ԽՈՐՈՎԱՆՑ և կին մասածիստ ԿՐԱՆՎԱՍԻՍ:

(№ 71) 8—30

ԵԿԱՏԵՐԻՆՊՈԼԻՍ միջառան երկուս քաղաքների համար հարկաւոր են երկու ցենզուոր հոյ ուսուցիչներ, մէկը հայոց լեզուի, թուրքական, գերազուրութեան, զմազուրութեան և երգեցողութեան, շաբաթական 24 դասով և աւագ ուսուցչի պաշտօնով: Իսկ միւսը, ուսուց լեզուի և ուսուց գերազուրութեան, շաբաթական 16 դասով և վերակացուի պաշտօնով:

Յանկացողները կարող են գիմել Եկատերինսկայ, Գէորգ քահանայ Զաքարեանին և յայտնել իրանց պայմանները:

(№ 82)

1—3

Պ. Ս. ԴՈՐՈՋԵՆՈՎ (Եւրոպայից)

Գլխաւորապէս փող. Սարաջեւի նոր տուն,
բա կ ու մ:

Է Ժ Ա Ն Գ Ն Ո Վ

Բազուի տնտեսական յետոյ մնացած ապրանքները, որ բաղկացած է իսկական Եւրոպայիկան ձեռագործ քաթանից՝ շապիկների, փոխանների, շաբաւների համար և այլն ամեն գներով: Կայ մեծ ընտրութիւն սեղանի սպիտակեղէնի, պիլէից կարված վերմակների, թանշեյ գորգերի, սփռոցների և այլ քաթանեղէն և չէթեղէն ապրանքների:

Առևտուրը կը լինի կտրական գնով և կարծ (№ 79) ժամանակով 3—3

ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

աղգային լիակատար երգարանի առաջին հասարակ, չորրորդ հրատարակութեամբ, որ տպագրվում է Մոսկվայում, լոյս կը տեսնի յուլիսի վերջին: (№ 76) 3—3

ԿԵՕԼԵՐԻ ՓՈՇԻՆ ՅԱՏԱԿՆԵՐԸ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Նոյնպէս դռները, սանդուղաները, պատուհանները շրջանակները և առհասարակ ամեն փայտեայ անային կահարասքը, ինչպէս խոհանոցի սեղաններ, տախտակներ և այլն վաճառվում է ԱՄԵՆ ՏԵՂ ԵՒ ԲՈՒՐ Նշանաւոր առևտրականների մօտ:

Այդ փողոց միջոցով բոլոր յիշված առարկաները, թէ ներկված և թէ աններկ, լուացվում են գրեթէ առանց աշխատանքի և աւելի էժան ու շուտ, քան թէ ուրիշ միջոցով: (№ 82) 1—2

ՕԺԻՏԻ ԸՊԱՀՈՎԵՐՈՒԹԻՒՆ

Ա Ղ Զ Կ Ե Ր Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒՆ Է 23,000,000 ՐՈՐԵՐԻ:
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «ՐՕՍՍԻԱ» ընկերութիւնը առաջարկում է ՕԺԻՏԻ (բաժինը) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ՐՈՒՐԻ ՕԺԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «Րօսսիա» ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամից յետոյ 52 ՐՈՐԵՐԻ:

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները), եթէ միայն ապահովագրված երեխան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թւի յունվարի 1-ին «ՐՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրված էին 31,701 անձինք 83,708,760 ՐՈՐԵՐԻ դրամագլխով:

Տղայ ԵՐԵՄԻԱՆԻ համար ևս կարելի է ապահովացնել դրամագլխով նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլխը կը ստացվի իբրև թոշակ (պէնսիա) ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիեւսկայ փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում: (№ 71) (2) 4—52

ՄՈՒԵՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Զ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Ֆնտեսութիւն, 2) Առևտրական Թուրքանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուրքանութիւն համընթի լրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղադրութիւն, վատ ձեռքի ուղղիլը:

Աւսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում: Սօլդակում, Ալեքսանդր Ժրիգոնովի տանը, № 9, Սերգիեւսկայ և Նազարեայ փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(Ե. շ.) № 62

5—25